1700-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՄԻՋԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հուլիսի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, գլխավորությամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, Տերունական աղոթքով բացվեց Հայաստանում Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի Ուխտագնացության երիտասարդական հանձնախմբի միջթեմական ժողովը:

Ներկա էին սփյուռքի և Հայաստանի թեմերի, ինչպես նաև ուխտագնացության կազմակերպման Խոր Վիրապի, Երևանի և Էջմիածնի աշխատանքային խմբերի ներկայացուցիչներ: Սրբազան Հոր բացման խոսքից հետո զեկույցով հանդես եկավ Երևանի գրասենյակի ներկայացուցիչ Արմինե Թադևոսյանը՝ անցյալ ժողովների ընթացքի և հանձնախմբի աշխատանքների ամփոփ ներկայացումով, որից հետո զեկույցով հանդես եկան Խոր Վիրապի վանահայր և համապատասխան հանձնաժողովի պատասխանատու Տ. Մխիթար քահանա Մարիբեկյանը, Երևանի պատասխանատու Հովհաննես Ավագյանը, իսկ Էջմիածնի հանձնաժողովի աշխատանքը ներկայացրեց 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար, Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: Ծրագրերի ներկայացումից հետո եղան համապատասխան առաջարկներ:

Ժողովը շարունակվեց թեմական հանձնախմբերի կազմավորման և գործունեության սկզբունքների քննարկմամբ: Հատուկ ուշադրություն դարձվեց այն հանգամանքի վրա, որ ԱՊՀ երկրները պատշաճ ձևով ներգրավված չեն ուխտագնացության կազմակերպման աշխատանքներում: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչի պաշտոնակատար Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանին հանձնարարվեց կազմել և ներկայացնել ուխտագնացության խմբերում ԱՊՀ երկրների հայ համայնքներին ընդգրկելու աշխատանքային ծրագիր:

Ժողովի վերջում փակման խոսքով հանդես եկավ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: Սրբազան Հայրն իր խոսքում մասնավորապես նշեց, որ հեռանկարում նախատեսվում է չորս կենտրոնների աշխատանք Հարավային և Հյուսիսային Ամերիկաներում, Մերձավոր Արևելքում, ԱՊՀ տարածաշրջանում: Միջթեմական ժողովի հաջորդ նիստը նշանակվեց նոյեմբեր ամսին: